

փխրափայլ մահէն վերջ. անոր աշակերտները չափազանցութեան տարին վարպետի պատուէրները եւ յայտարարելին թէ ծիսակատարութիւնները ծիծաղելի են եւ յաճախ բոլորովին աւելորդ, քանի որ անոնց ծնունդ տուող պատմական պատճառները դադարած են գոյութիւն ունենալ: Միւս կողմէ՝ բարբրները կը կառչէին թալմուտի տառերուն եւ կը յեղյեղէին անոր քացորոջ պատուէրը «արգելեցէ՛ք ձեր գաւազները խորհելէ»:

Մայրօճիտի գաղտնիքները պիտի ծառայէին Իսրայէլի ոչնչացման եւ ձուլման օտար ազգերու բովին մէջ, կ'ըսէին անոնք:

Մոսիէլիէցի բարբի մը հաւատաքննական ատեանին դիմեց Մայրօճիտի երկերը հաւաքելով այրելու համար, ըսելով թէ անոնք այնչափ վնասակար են հրէականութեան, որչափ քրիստոնէութեան:

Բարսելօնի մէջ հաւաքուած բարբիական ժողով մը բանադրեց այն բոլոր քանրհինգ տարեկան հրէայ երիտասարդներն, որոնք Աստուածաշունչէն ու թալմուտէն զատ ուրիշ ուրիշ գիտք կորցալ կը համարձակէին:

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

ԺՁ զարուն է որ Վերածնութեան շնորհիւ թիւ մը կը մեղմանայ հրէից դէմ հալածանքը: Եւրոպացի դիմապահներ կը հետաքրքրուին անոնց գրականութեամբ եւ մինչեւ իսկ Գերմանիոյ մէջ երբայերէն տպարաններ կը հաստատուին քրիստոնէաներու ձեռամբ: Սօրպօնը, որ թալմուտներն այրելու հրամաններ արձակած էր յաճախ, Ռէնսի մէջ երբայերէնի ամբիոն մը կը հաստատէ եւ քրիստոնէայ ու հրէայ աստուածարաններու մէջ բարեկամական յարաբերութիւններ կը հաստատուին մեծ կեդրոններու մէջ:

Վերածնութեան հովանիին տակ ծնունդ Բողոքականութիւնն ալ մասամբ նպաստեց հրէից հալածանքներու մեղմացման: Կաթոլիկ եկեղեցւոյ քննադատութիւններ եւ Ս. Գրքի մեկնութիւններ շատոնց արդէն գոյութիւն ունէին արար եւ հրէայ գրականութեանց մէջ եւ կայլինական կամ լատինական բարենորոգիչները յաճախ բառացի ընդօրինակած են անոնց-

մէ: Սխալ չըլլար ըսելը, թէ բողոքականութիւնը պատրաստուած է թալմուտի շուրջ յարուցուած քննադատականներով:

Ժան Ռօյսլին, Վերածնութեան կարեւորագոյն դէմքը, որ կայսեր կողմէ հրաւիրուած էր ուսումնասիրելու թալմուտը, տեղեկազրեց անոր, թէ անարդար է թալմուտն այրել եւ թէ ընդհակառակն անոր ուսումնասիրութիւնը կարեւոր է քրիստոնէութեան համար:

Ռօյսլինի այս յիշատակազրերն որ իրաւունք կուտար հրէաներուն, գոհացում տուաւ նաեւ կայսեր, որ խաղաղութիւն կը բաղձար: Սակայն, Պապը գոհ չմնաց: Ռօյսլինի եւ հաւատաքննական ատեանին մէջ դատաւարութիւն մը սկսաւ, որ երկար տեւեց եւ առիթ տուաւ երկուստեք բուն յարձակումներու:

Անհամար գրքոյկներ հրատարակուեցան վանականներու տղիտութեան եւ անբարոյականութեան, հաւատաքննութեան եւ պապութեան դէմ, եւ այս ամէնը պատրաստ դուռ Լութեր իր պայքարն սկսելու համար:

Գետինը պատրաստուած էր արդէն Ռօյսլինի կուսակիցներուն կողմէ եւ Լութերի գորաւոր անհատականութիւնը կեանք տուաւ պայքարին:

Բողոքականութիւնն ալ դժբախտաբար շատ նպաստաւոր չեղաւ հրէաներուն:

Լութեր սկիզբները կը պաշտպանէր հրէաները, յուսալով դանոնք իր նոր կրօնին դարձնել, բայց իր կեանքի վերջին տարիներուն, երբ յուսախաբ եղաւ, գրեց թէ «հրէաները անասուններ են եւ իրենց սինակօղիները խողերու ախոռներ»:

ՄԱՌԱՆ

Ամբողջ միջին դարերուն, Սպանիան հրէաներուն համար եղած էր առանձնաշնորհեալ երկիր մը. թէեւ հաւասարապէս ատելի էին թէ՛ իշխող մարիտանացիներուն եւ թէ՛ բնիկ սպանիացիներուն, բայց ոսկիի վաճառականութիւնն իրենց ձեռքն ունենալով կը յաջողէին կաշառել գլխաւոր պաշտօնեաներն եւ անոնց ներդրամութեան արժանանալ:

Երբ հետզհետէ քրիստոնէայ թագաւոր-